

## ՏԱՐՈՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Ծնվել է 1978 թվականի ապրիլի 17-ին, Երևանում:  
1995թ. էքստեռն կարգով ավարտել է Ավանի #177 դպրոցը և նույն թվականին ընդունվել Հայկական գյուղատնտեսական ակադեմիա:

2001թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի մագիստրատուրան և ստացել ճարտարագիտության մագիստրոսի աստիճան՝ գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ:  
2001-2003թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանումում որպես առաջատար մասնագետ, այնուհետև՝ բաժնի պետ:  
2003թ. նշանակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ:

2005թ. ընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավար: 2008թ. վերընտրվել է Երևան քաղաքի Ավան համայնքի ղեկավարի պաշտոնում:

2009թ. մայիսի 31-ին ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

2009թ. հուլիսի 7-ին միաձայն ընտրվել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

2011թ. նոյեմբերի 15-ին Երևան քաղաքի ավագանու կողմից ընտրվել է Երևանի քաղաքապետ:

2013թ. մայիսի 5-ին և 2017թ. մայիսի 14-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով վերընտրվել է Երևանի քաղաքապետ:

2010թ.-ից ԵԿՄ վարչության և նախագահության անդամ է:

1996 թ.-ից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, իսկ 2006 թ.-ից՝ ՀՀԿ խորհրդի անդամ:

1998-2011թթ. ղեկավարել է Հայաստանի հանրապետական կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհուրդը:

2012թ. -ից ՀՀԿ գործադիր մարմնի անդամ է:

2017թ.-ից Երևան քաղաքի ՀՀԿ տարածքային կազմակերպության աշխատանքները համակարգողն է:

2012թ. ընտրվել է ԵՃՇՊՀ խորհրդի նախագահ:

2013թ. ղեկտեմբերին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» թեմայով:

2014թ. փետրվարին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ԲՈՀ-ի Տնտեսագիտության մասնագիտական խորհրդի որոշմամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2014թ. սեպտեմբերին ընտրվել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահի տեղակալն է և Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահը:

## **Հասարակական-քաղաքական գործունեության ընթացքում պարգևատրվել է.**

ՀՀ Նախագահի կողմից՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (2016թ.):

ՀՀ Նախագահի կողմից՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով (2013թ.), «Անանիա Շիրակացի» մեդալով (2008թ.):

ԼՂՀ Նախագահի կողմից՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2016թ.):

ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից՝ ՀՀ ԱԺ պատվո մեդալով (2011թ.):

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ «Գարեգին Նժդեհ» (2008թ.) և «Անդրանիկ Օզանյան» (2011թ.) մեդալներով:

Երևանի քաղաքապետի կողմից՝ Ոսկե մեդալով (2008թ.):

Հայաստանի ազրարային համալսարանի ոսկե մեդալով:

Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով և «Լեոնահայաստանի Արծիվ» ոսկե հուշամեդալով:

Երկրապահ կամավորականների միության կողմից՝ «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանով:

«Հայաստանի համայնքների միության» կողմից՝ ոսկյա, անվանական հուշամեդալով՝ Հայաստանում տեղական ժողովրդավարության զարգացմանն անձնական նշանակալից ներդրման համար:

ՀՀ ոստիկանության պետի կողմից՝ «Համագործակցության համար» մեդալով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից՝ ՀՀ ԱԲՆ «Փառքի խաչ Նոյ» (2017թ.) մեդալով, ՀՀ ԱԲՆ «Պատվավոր աշխատակից» մեդալով (2014թ.):

ՀՀ արդարադատության նախարարի կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարության «Շահամիր Շահամիրյանի անվան» հուշամեդալով (2014թ.):

ԼՂՀ պաշտպանության նախարարի կողմից՝ «Պաշտպանության բանակ» հուշամեդալով (2014թ.):

Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) կողմից՝ թանգարանային գործում ունեցած ավանդի համար մեդալով:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի կողմից՝ «Խաչատուր Աբովյան» ոսկե մեդալով (2015թ.):

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի «Արվեստի մեկենաս» Պատվո մեդալով (2015թ.):

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ոսկե մեդալով (2015թ.):

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ «Համագործակցության համար» մեդալով (2015թ.):

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի Ոսկե մեդալով (2015թ.):

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով (2015թ.):

Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի կողմից՝ «Ավետիք Իսահակյան» հուշամեդալով (2015թ.):

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ բարձրագույն պարգևով «Ոսկե հուշամեդալով» (2016թ.):

«Փոքր Մհեր» կրթահամալիրի «Հայկագունական Փառք» մեդալով (2016թ.):

Ամուսնացած է, ունի մեկ դուստր և հինգ որդի:

Պաշտոնավարել է մինչև 2018թ. հուլիսի 9-ը: